ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 8-9/I

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» հունվար 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ Կոմիտե), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և *«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն»ՊՈԱԿ*-ը , ի դեմս տնօրեն *Տիգրան Մարկոսյանի* (այսուհետ՝ Կազմակերպություն),որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված **70623.6** (յոթանասուն միլիոն վեց հարյուր քսաներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 Կոմիտե ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

2.4.13

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **70623.6** (յոթանասուն միլիոն վեց հարյուր քսաներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ.

բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտե	ՀՀ <<Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22	Երևան, Նուբարաշեն, Մասիսի խճուղի 107/2
Հ/հ 900011033033	ՀՎՀՀ 03506324 Հ/Հ 900018006008 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	

Գլխավոր քարտուղար՝ _____
(ստորագրություն)

ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

Կ. Տ.

Տնօրեն _____
(ստորագրություն)

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 1
«29» հունվար 2019 թ.
N 8-9/I պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանը և Կազմակերպության տնօրեն Տիգրան Մարկոսյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «29» հունվար 2019թ. N 8-9/I պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ 70623.6 (յոթանասուն միլիոն վեց հարյուր քսաներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե	Կազմակերպություն
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ	ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված 2
«29» հունվար 2019թ.
N 8-9/I պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

"Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում" ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

Անասնաբուժական ուղղվածության աշխատանքների հիմնական նպատակն է լինելու շարունակել ուսումնասիրել վարակիչ հիվանդությունների համաճարակաբանությունը գնահատել նրանց դեմ ներկայումս իրականացվող պայքարի և կանխարգելման, մշակել և կատարեկագործել պայքարի միջոցները և միջոցառումները և աշխատանքներ տանել միջազգային առաջավոր փորձի, նորագույն մեթոդների և միջոցների ներդրման և արդի պայմաններին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Անասնաբուծական ոլորտում շարունակվելու են իրականացվել գիտա-արտադրական աշխատանքներ տավարաբուծության, ոչխարաբուծության, խոզաբուծության, թռչնաբուծության ինչպես նաև կերարտադրության բնագավառներում:

Բույսերի պաշտպանության ոլորտում իրականացվելու են գյուղատնտեսական մշակաբույսերի և անտառային ծառատեսակների վնասակար օրգանիզմների ուսումնասիրություններ և պեստիցիդների փորձարկումներ առավել վտանգավոր տեսակների դեմ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել Հայաստանում, ընդգրկելով այն բոլոր տարածքները, որտեղ առկա են համապատասխան խնդիրներ և գիտահետազոտական աշխատանքների իրականացման հնարավորություն և անհրաժեշտություն: Գիտական կենտրոնի բազմամյա գործունեության ընթացքում բազմաթիվ գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսական կենդանիների տարաբնույթ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, ախտորոշման, կանխարգելման հիմնահարցերի վերաբերյալ: Ներկայումս մեծ հետաքրքրություն է ներկայացնում կենդանիների առողջության հետ կապված ռիսկերի գնահատումը և վերլուծությունը, որը հիմք պետք է հանդիսանա ռիսկերի կառավարմամբ

զբաղվող համապատասխան պետական մարմինների համար ավելի արդյունավետ աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ: Ռիսկերի կառավարումը իրականացվում է ռիսկերի գնահատման և գիտական տվյալների վերլուծության հիման վրա, սակայն հաշվի են առնվում նաև այլ գործոնների առկայությունը, ինչպիսիք են օրինակ շրջակա միջավայրի պաշտպանության և կենդանիների առողջության և բարեկեցության հիմնահարցերը: Իրականացվող աշխատանքները բաղկացած են լինելու ինչպես արտադրական /դաշտային/, այնպես էլ լաբորատոր բաղադրիչներից, որոնք սերտ կապված են իրար հետ և թույլ կտան ընդգրկել գիտական կենտրոնի ողջ մասնագիտական ներուժը: Աշխատանքի նպատակներին հասնելու համար կօգտագործվեն, ինչպես ավանդական, այնպես էլ գիտական արդի մեթոդներ և մոտեցումներ:

Անասնաբուծության գծով շարունակվելու են աշխատանքներ իրականացվել հանրապետությունում բուծվող գյուղատնտեսական կենդանիների և թռչունների ցեղերի գենոֆոնդի պահպանման ու նրանց տոհմամթերատու հատկանիշների կատարելագործման, նրանց կերաբաժիններում տեղական հանքային կերերի և կենսաբանական ակտիվ նյութերի օգտագործման, ինչպես նաև հանրապետության բնական և արհեստական կերհանդակների բերքատվության բարձրացման ու արդյունավետ օգտագործման ուղղությամբ հետազոտությունները:

Բույսերի պաշտպանության հետ առնչվող հետազոտությունները կկատարվեն ինչպես լաբորատոր, այնպես էլ բաց և փակ գրունտի պայմաններում, ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում: Նախատեսված ուսումնասիրությունների իրականացման համար առկա է անհրաժեշտ գիտական ներուժը, ինչպես նաև մի շարք սարք-սարքավորումներ (համակարգիչ, լաբորատոր ապակեղեն, սրսկիչներ, բինոկուլյարներ և այլն):

4. <u>Աշխատանքի բովանդակությունը:</u>

Մեր տարածաշրջանը համարվում է մշտապես անապահով կենդանիների մի շարք վարակիչ հիվանդությունների նկատմամբ, որոնց թում են նաև մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունները: Տարբեր տարիների ընթացքում մեր հանարապետությունում ևս գրանցվել ու գրանցում են գյուղատնտեսական կենդանիների մի շարք վարակիչ հիվանդություններ, որոնք բազմաթիվ խնդիրներ են առաջացնում անասնաբուժական ծառայությունների համար և մեծ տնտեսական վնաս են պատճառում անասնապահությանը: Մասնավորապես այդ հիվանդությունններից են բրուցելյոզը, սիբիրախտը, դաբաղը, խոզերի աֆրիկական ժատախտը, խոշոր եղջերավոր կենդանիների նոդուլյար մաշկաբորբը, թռչունների Նյուքասլյան հիվանդությունը և այլն:

Դաբաղ հիվանդության համաճարակային իրավիճակի վերլուծությունը վերջին տարիների ընթացքում մեկ անգամ ևս հաստատում է այն փաստը, որ այս հիվանդության հետ կապված գիտահետազոտական աշխատանքները, համաճարակային իրավիճակի հետհայաց և ընթացիկ վերլուծությունները պետք է մշտապես իրականացվեն և արդյունքում ստացված ռիսկերի ու համաճարակային իրավիճակի գնահատման հետ կապված տեղեկատվություն տրամադրվեն համապատասխան պետական լիազոր մարմնին կանխարգելման և պայքարի միջոցառումների արդյունավետ կազմակերպումը իրկաանցնելու նպատակով: Շարունակական աշխատանքներ պետք է իրականացվեն նաև վերը նշված բակտերիալ և վիրուսային հիվանդությունների ռիսկերի գնահատման ուղղությամբ հաշվի առնելով ինչպես վերջին տարիներին գրանցվա բռնկման դեպքերը այնպես էլ հարևան երկրներում առկա ընթացիկ համաճարակային իրավիճակը:

Դեռևս մեծ խնդիրներ կան կապված բրուցելյոզ հիվանդության հետ, քանի որ հիվանդության դրսևորման դեպքերը գյուղատնտեսական կենդանիների շրջանում ցույց են տալիս աճի միտումներ և դա մեծ խնդիր է հանդիսանում նաև հանրային առողջապահության տեսանկյունից: Քանի որ, մեր հանրապետությունում բրուցելյոզի դեմ արդյունավետ պայքարի կազմակերպումը շատ արդիական խնդիր է հանդիսանում, ուստի հատուկ ուշադրություն է դարձվելու այս հիվանդության ուղղությամբ իրականացվող հետազոտական աշխատանքներին, որի շրջանակներում իրականացվելու է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելյոզի նկատմամբ վերահսկողության ազգային ծրագրի շրջանակներում կատարած համաճարակային իրավիճակի վերբերյալ ուսումնասիրություններ:

Առանձնակի ուշադրություն է դարձվելու ներկայումս համաշխարհային նշանակություն ունեցող հակամանրէական դեղամիջոցների նկատմամբ մանրէների ռեզիստենտականության հետ կապված հիմնահարցերին: Փորձ է արվելու անջատել գյուղատնտեսական տարբեր կենդանիների օրգանիզմում առկա և այս տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող մանրէները, որոշել դրանց տեսակային կազմը և տարբեր հակամանրէական դեղամիջոցների նկատմամբ ռեզիստենտականության աստիճանը:

Կուտակված բազմամայա համաճարակաբանական տվյալների, ինչպես նաև իրականացվող հետազոտությունների արդյունքում ձեռք բերված արդի տվյալների հիման վրա կշարունակվեն իրականացվել վերլուծական աշխատանքներ, նպատակ ունենալով հարստացնել տվյալների և տեղեկատվության առկա բազան, կապված մեր հանրապետությունում առկա և ռիսկային հանդիսացող կենդանիների վարակիչ հիվանդությունների վերաբերյալ, որն էլ հետագայում հիմք կհանդիսանա անասնաբուժական պետական ծառայության համար հակահամաճարակային միջոցառումների ավելի արդյունավետ պլանավորման և իրականացման համար:

պատրաստուկը տարբեր չափաքանակներով և կտրվի դրա կենսաբանական արդյունավետության գնահատականը:

Գազարի բարձր և որակով բերքի ստացմանը խանգարում են մի շարք վնասակար օրգանիզմներ, այդ թվում մոլախոտեր: Ծրագրվում է Կոտայքի մարզի գազարի ցանքատարածություններում այս մշակաբույսի մոլախոտային բուսականության դեմ փորձարկել Միուրա (ազդեղ նյութը՝ խիզալոֆոպ Պ-էթիլ) հերբիցիդի տարբեր չափաքանակներ: Լոլիկի ֆիտոֆտորոզ և ալտերնարիոզ հիվանդությունների դեմ Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանում կփորձարկվի Մելոդի Կոմպակտ սնկասպանի 1,5 կգ/հա ծախսի նորման:

Կշարունակվեն պտղատուների բակտերիալ այրվածք հիվանդության դեմ ազդեցության տարբեր մեխանիզմներ ունեցող կենսաբանական և քիմիական ծագման պատրաստուկների փորձարկումները Արարատի մարզի ծիրանենու այգիներում: Անհրաժեշտ պատրաստուկների բավարար քանակության առկայության դեպքում նախատեսվում է փորձարկումներ իրականացնել նաև տանձենու այգիներում:

Արագածոտնի մարզի Թթուջրի անտառտեղամասից լաբորատոր փորձարկումների նպատակով կհավաքվեն լեռնային օղակավոր մետաքսագործի ձվակույտեր: Թրթուրների դուրս գալուց հետո վնասատուի տարբեր հասակների դեմ կփորձարկվեն մի շարք կենսաբանական և քիմիական ինսեկտիցիդների տարբեր խտություններ: Ֆիտոֆագի դեմ բարձր արդյունավետություն ցուցաբերած տարբերակները բաժնյակային պայմաններում կփորձարկվեն մարզի անտառտեղամասերում:

Կիրականացվի փորձարկված պեստիցիդների ընդունելի տարբերակների թունազրկման առանձնահատկությունների ուսումնասիրություններ բերքում, դրանց «սպասման ժամկետներ»-ի ճշտման և հաստատման նպատակով: Կուսումնասիրվեն Մելոդի Կոմպակտ և Վարրանտ պեստիցիդների ազդեցությունը բերքի հիմնական որակական ցուցանիշների վրա: Կմշակվի Վարրանտ միջատասպանի մնացորդների որոշման մեթոդը քրոմատոգրաֆիայի եղանակով: Ծրագրվում է իրականացնել կարանտինային մոլախոտ՝ սողացող դառնախոտի վնասակարության ռիսկերի գնահատում և վերլուծություն:

Տնօրեն՝ _____ Տիգրան Մարկոսյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Տիգրան Մարկոսյան

Հավելված 3
«29» հունվար 2019թ.
N 8-9/I պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

"Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում" ծրագրի

Հ/Հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Համաճարակաբանական տվյալների հավաքագրում, անասնաբուժական ռիսկերի գնահատում մեթոդաբանության ուսումնասիրում:	ուսումնասիրել ՀՀ-ում արձանագրվող և հարևան երկրներից սպառնացող վարակիչ հիվանդությունների համաճարակաբանությունը /տարածվածությունը, ընթացքը, արձանագրման հաճախականությունը, սեզոնայնությունը, հիվանդության մեջ ընդգրկված կենդանիների, թռչունների տեսակային և հասակային կազմը, անկումների քանակը և այլն/	աշխատանքները իրականացվելու են հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների առավել տարածված և խիստ վտանգավոր վարակիչ հիվանդությունների ուսումնասիրման ուղղությամբ, ինչպես նաև այդ հիվանդությունների առաջացման և տարածման ռիսկերի գնահատման տեսանկյունից:	հստակ պատկերացում կազմել հանրապետությունում ներկա և սպառնացող համաճարակային իրավիճակի վերաբերյալ, գնահատել հնարավոր ռիսկերը, որոնք կարող են ազդել կենդանիների առողջության և մթերատվության վրա:	Հունվար-մարտ	14124.72
	Հետազոտության համար տնտեսությունների ընտրություն և գլխաքանակի հաշվառում	Կերակրման և բուծման հետ կապված աշխատանքներ իրականացնելու նպատակով հանրապետության կտրվածքով ընտրել տավարաբուծությամբ, թռչնաբուծությամբ զբաղվող տնտեսություններ	Նշված տնտեսություններում իրականացնել տավարաբուծության բնագավառում ստացված սերնդի մսային և կաթնային մթերատվության գնահատում, ոչխարաբուծության	Հանրապետության կտրվածքով բուծվող գյուղատնտեսական կենդանիների և թռչունների մթերատվության գնահատում, ամառային արոտավայրերում նրանց		

	Ծանոթացում բույսերի պաշտպանության գծով արտերկրում առկա գիտական առաջավոր փորձին համացանցի և հասանելի այլ աղբյուրների միջոցով:	Կուսունասիրվի արտերկրի առաջավոր գիտական փորձը:	բնագավառում մսատվության, կաթնատվության և բրդատվության ցուցանիշների գնահատում, Կմշակվի առաջավոր փորձը մեր հանրապետությունում ներդնելու տարբերակներ:	պահվածքի մեթոդների մշակում, ստացված մթերքների և հումքի արժեքների գնահատում: Որակյալ և բարձր բերքի ստացում:		
2	Փորձարարական և լաբորատոր հետազոտություններ	ՍԳԸ-ների մշակում և ներդրում, աշխատանքներ են տարվելու միջազգային առաջավոր փորձի, նորագույն մեթոդների և միջոցների /հիվանդությունների ախտորոշման, կանխարգելման, բուժման նպատակներով/ ներդրման և արդի պայմաններին համապատասխանեցնելու ուղղությամբ:	Լաբորատոր-փորձարարական աշխատանքների - իրականացում կապված հիվանդությունների բռնկման դեպքերից, որի հիման վրա առաջարկություններ կներկայացվեն պայքարի և կանխարգելման համար և այդ առումով կօգտագործվեն ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մոլեկուլյար-կենսաբանական մեթոդներ:	համապատասխան սարքավորումների և նյութերի, ախտորոշման ժամանակակից մեթոդների ընդգրկումը գործընթացի մեջ հնարավորություն կտա գիտականորեն հիմնավորված վերլուծությունների և առաջարկությունների ներկայացման համար, ինչն էլ կբարձրացնի պայքարի և կանխարգելման միջոցառումների արդյունավետությունը	Ապրիլ-հունիս	17655,9
	Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների կերակրման և բուծման հետ կապված աշխատանքներ	կուսումնասիրվեն ՀՀ-ում եվրոպական տարբեր երկրներից ներկրված հոլշտին, շվից և սիմենթալ ցեղերի, կովերի տոհմա-մթերատու հատկությունները:	ուսումնասիրությունների հիման վրա բնութագրվելու են նշված ցեղերի կովերը՝ համալիր հատկանիշներով համեմատելով ցեղերը միմյանց հետ և ստանդարտի ցուցանիշների հետ:	կորոշվեն կովերի կաթնատվությունը, կաթի մեջ յուղի պարունակությունը, կենդանի զանգվածը և այլ ցուցանիշներ:		
	ընտրասերման և սերմերի նախնական բազմացման	բազմամյա խոտաբույսերի նոր, բարձրաժեք սորտերի	ընտրասերման և սերմերի նախնական բազմացման	արտադրության մեջ ներդրման համար		

	գիտահետազոտական աշխատանքներ	ստեղծում, որպես ելանյութ օգտագործելով հանրապետության բնական հանդակներում լայնորեն տարածված նրանց տեղական վայրի ձևերը	աշխատանքները նախատեսվում է տանել դաշտավլուկազգի բազմամյա արժեքավոր խոտաբույսի՝ հավաքված ոզնախոտի հետ			
	Ժամանակակից պատրաստուկների փորձարկումներ տարբեր մշակաբույսերի վրա:	լաբորատոր և դաշտային պայմաններում մի քանի պեստիցիդների տարբեր չափաքանակների փորձարկումներ վնասակար օրգանիզմների դեմ:	կուսումնասիրվի միջատասպան, սնկասպան և մոլախոտասխան պատրաստուկների կենսաբանական արդյունավետությունը:	կնտրվեն առավել արդյունավետ տարբերակներ արտադրական պայմաններում փորձարկելու և ֆերմերային տնտեսություններին առաջարկելու նպատակով:		
	Միջատաբանական, ֆիտոպաթոլոգիական և հերբոլոգիական հետազոտություններ	վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի ուսումնասիրություններ ՀՀ տարբեր մարզերի պայմաններում:	հետազոտությունները կիրականացվեն ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում առավել վնասակար տեսակների տարածվածության ու վնասակարության ուսումնասիրման ուղղությամբ:	վտանգավոր տեսակների տարածվածության պարզաբանում և հասցված վնասակարության պատկերացում:		
3	Բրուցելյոզի, դաբաղի, ԽԱԺ-ի այլ հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների հետ կապված վերլուծական և հետազոտական աշխատանքներ: ՀՄՌ-ի հետկապված աշխատանքներ	ընթացիկ համաճարակային իրավիճակից ելնելով ուսումնասիրություններ արդյունքների վերլուծություն: Հետագա աշխատանքների ուղղվածության որոշում:	հատուկ ուշադրություն կդարձվի բացահայտելու և գնահատելու այն ռիսկային գործոնների առկայությանը, որոնք օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով նպաստում են վարակների առաջացմանը, զարգացմանը և տարածմանը:	Ստացած տվյալները կտրամադրվեն համապատասծան լիազոր մարմնին, ինչպես նաև հիմք կհանդիսանան հետագա գիտահետազոտական աշխատանքների ուղղվածությունը որոշելու համար:	Հուլիս-սեպտեմբեր	17655,9
	Կերակրման և բուծման հետ կապված աշխատանքների շարունակություն	տոհմա-մթերատու հատկությունները:	Մարդու համար «առողջ սննդի» ստացման հետ մեկտեղ ակնկալվում է կերերի որակի և կոնվերսիայի բարելավում, մթերատվության և գլխաքանակի պահպանման	ակնկալվում է մթերատվության բարձրացմանը ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկությունների և		

	Սողացող դառնախոտ մոլախոտի վնասակարության ռիսկերի գնահատում և վերլուծություն	Աշխատանքները կկատարվեն գիտական առկա տվյալների և տեղեկատվական այլ աղբյուրների օգտագործմամբ:	տոկոսի բարձրացում: Համակարգչային հատուկ ծրագրի միջոցով մոլախոտի տարածման ռիսկերի գնահատում և վերլուծություն:	մեթոդների մշակում Սողացող դառնախոտ մոլախոտի վերաբերյալ իրավիճակի գնահատումը, հնարավոր ռիսկերի բացահայտումը կարող է ազդել մշակաբույսերի բերքատվության վրա:		
4	Բոլար ուղղություններով աշխատանքների շարունակություն: Ստացված տվյալների ամփոփում և հաշվետվության կազմում, առաջարկությունների և մոտեցումների ձևակերպում	կիրականացվեն վերլուծական և անհրաժեշտության դեպքում քարտեզագրման աշխատանքներ, նպատակ ունենալով ստեղծել տվյալների և տեղեկատվության բազա:	կատարված աշխատանքների հիման վրա կմշակվեն ցուցումներ. հրահանգեր և հոդվածներ	Նախանշված սպասվելիք արդյունքների ստացում, ինչպես նաև այլ լրացուցիչ գիտահետազոտական արդյունքներ, որոնք կարող են արժեքավոր լինել անասնաբուժության, բույսերի պաշտպանության և անասնաբուծության բնագավառների համար:	Հոկտեմբեր-դեկտեմբեր	21187,08
Ընդամենը						70623.6

Կազմակերպության տնօրեն՝ _____ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված 4
«29» հունվար 2019 թ.
N 8-9/I պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագիր

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	53000,0	*10600,0*	*13250,0*	*13250,0*	*15900,0*
2	տնտեսական և այլ ծախսեր	5853,0	*1170,6*	*1463.25*	*1463.25*	*1755,9*
Ընդամենը (առանց ԱԱՀ)		***58853,0***	***11770,6***	***14713,25***	***14713,25***	***17655,9***
ԱԱՀ		*11770,6*	*2354,12*	*2942.65*	*2942.65*	*3531,18*
ԸՆԴԱՄԵՆԸ		70623.6	14124.72	17655,9	17655,9	21187,08

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ՄԱՐԻԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված 4.1
«25» հունվար 2019 թ.
N 8-9/I պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**2818,0**
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*2400,0*
	գազի ծառայություն	-
	ջրամատակարարման ծառայություն	*76,0*
	կապի ծառայություն	*294.0*
	աղբահանություն	*24,0*
	դեռատիզացիա	*24.0*
2	Գույք	-
3	Սարքեր և սարքավորումներ	-
4	Նյութեր	*2135,0*
5	Գործուղումներ	*300,0*
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	-
9	Այլ ծախսեր	*600,0*
Ընդամենը		**5853.0**

Կազմակերպության տնօրեն՝ _____ Տիգրան Մարկոսյան
(ստորագրություն)

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ Մարիա Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 5
«29» հունվար 2019 թ.
N 8-9/I պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագիր

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Մարկոսյան Տիգրան Հակոբի	Տնօրեն	կ.գ.թ.	265000
2	Թերլեմեզյան Հրանտ Լևոնի	Փոխտնօրեն	գ.գ.դ.	190000
3	Սարգսյան Խաչիկ Վազգենի	Տնօրենի խորհրդական	ա.գ.թ.	170000
4	Գրիգորյան Մարիա Գառնիկի	Գլխ.հաշվապահ		200000
5	Հակոբյան Վարդուհի Լյովայի	Գիտքարտուղար	ա.գ. թ.	130000
6	Խանզադյան Սուրիկ Սերոբի	Կադր.բաժնի վարիչ		120000
7	Մկրտչյան Ժաննա Ռուբիկի	Գանձապահ,պահեստապետ		130000
8	Դոխրամաջյան Լուսյա Լևոնի	Գործավար		40000
9	Միրզոյան Մարիամ Սամվելի	Ավագ լաբորորանտ		75000
10	Սահակյան Ռազմիկ Անդրեասի	Բաժնի վարիչ	գ.գ.թ.	80000
11	Վարդանյան Հարություն Ռոբերտի	Գիտաշխատող	կ.գ.թ.	40000
12	Սարգսյան Վազգեն Խաչիկի	Անասնաբույժ		40000
13	Մինասյան Լևոն Մամիկոնի	Բաժնի վարիչ	գ.գ.դ.	40000
14	Սիմոնյան Արմեն Խաչատուրի	Գիտաշխատող	գ.գ.թ.	75000
15	Շիրվանյան Յուրի Ալեքսանդրի	Բաժնի վարիչ	ա.գ. թ.	90000
16	Ոսկանյան Հենրիկ Եղիշեի	Գիտաշխատող	ա.գ. թ.	90000
17	Առաքելյան Արմեն Խաչիկի	Գիտաշխատող		90000
18	Սիմոնյան Լիաննա Լևոնի	Գիտաշխատող	ա.գ.թ.	120000
19	Չոբանյան Գայանե Սմբատի	Գիտաշխատող		80000
20	Մանուկյան Վարսենիկ Ներսեսի	Լաբորանտ		40000
21	Էլբակյան Հասմիկ Լևոնի	Գիտաշխատող		60000
22	Հոսեփյան Ծաղիկ Սեմյոնի	Լաբորանտ		80000
23	Ղազարյան Շուշանիկ Ալբերտի	Ավագ լաբորորանտ		40000
24	Խառատյան Սաթենիկ Աշոտի	Բաժնի վարիչ	ա.գ. թ.	130000
25	Արտուշյան Իռմա Մեյրանի	Ավագ լաբորորանտ		80000
26	Ղազարյան Էլմիրա Հովհաննեսի	Ավագ լաբորորանտ		80000
27	Միլիտոսյան Մարիամ Ասքանազի	Ավագ լաբորորանտ		80000
28	Գեղամյան Լիլիթ Ռազմիկի	Կրտսեր գիտաշխատող		40000
29	Վարդանյան Տիգրանուհի Գնելի	Ավագ լաբորորանտ		40000
30	Միրզոյան Վարսենիկ Սամվելի	Ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	75000
31	Եղիազարյան Սուսաննա Երվանդի	Կրտսեր գիտաշխատող		40000
32	Կարապետյան Գաբրիել Արտաշեսի	Ավագ գիտաշխատող	գ.գ.թ.	80000

33	Բալայան Աննա Լևոնի	Ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	75000
34	Մկրտչյան Հաբեթնակ Նորայրի	Կրտսեր գիտաշխատող		80000
35	Սարգսյան Սոնա Մասիսի	Կրտսեր գիտաշխատող	գ.գ.թ.	80000
36	Պետրոսյան Նելլի Կառլենի	Ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	75000
37	Աղաջանյան Ռիմա Ռոբերտի	Գիտաշխատող		40000
38	Հարությունյան Հարություն Ռազմիկի	Կրտսեր գիտաշխատող	գ.գ.թ	80000
39	Սարգսյան Մասիս Աղասարի	Բաժնի վարիչ	գ.գ.դ.	90000
40	Աճեմյան Լևոն Հարությունի	Բաժնի վարիչ	կ.գ.թ.	80000
41	Թերլեմեզյան Կարեն Հրանտի	Ավագ լաբորորանտ		80000
42	Վերմիշյան Լիլիթ Գառնիկի	Գնումների համակարգող		40000
43	Ներսեսյան Ռոբերտ Սոսի	Բանվոր		100000
44	Սարդարյան Վլադիմիր Ավագի	Բանվոր		80000
45	Խաչատուրյան Լիլյա Մարտիրոսի	Հավաքարար		80000
46	Բայունց Վահրամ Էդիկի	Վարորդ		80000
47	Աբրահամյան Ալինա Խաչատուրի	Գործավար		80000
48	Թադեվոսյան Ազատ Համբարձումի	Բանվոր		40000
49	Աբրահամյան Պապին Սուրենի	Բանվոր		80000
50	Ղազարյան Աշոտ Մյասնիկի	Վարորդ		40000
51	Գալստյան Աղվան Հովսեփի	Բանվոր		90000
52	Շիրվանյան Հրանտիկ Սարգսի	Բանվոր		90000
	Ընդամենը			**4410000**

Կազմակերպության տնօրեն՝ _____ Տիգրան Մարկոսյան
(ստորագրություն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝ _____ Սուրիկ Խանգաղյան
(ստորագրություն)

Կ.S.